



2019-2020 ուստարվա «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Ուսանողական խորհուրդի կատարողական զեկույց

1. Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառում:

Ուսանողական խորհուրդը հավատարիմ մնալով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ավանդույթներին 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կամակերպեց գիտելիքի և դպրության օրվան նվիրված տոնական միջոցառում: Առաջին կուրսեցիներին նախ վոդջունեց Քոլեջի տնօրեն, տիկին Ի.Վարդայանը, տնօրենի տղակալ՝ Ն.Եգորյանը և Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը:

2. Ուսանողական խորհրդի նոր կազմի, հանձնաժողովների ձևավորում, նախագահների ընտրություն և հաստատում:

Համաձայն Ուսանողական խորհրդի կանոնակարգի հաստատվել է խորհրդի նոր կազմը և խորհրդի հնգամյա աշխատանքային պլանը: Հաջորդ ուսումնական տարվանից պլանավորվում է ձևավորվել երկու աշխատանքային խմբեր՝ Ուսումնական և Կառավարչական հարցերի:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական խորհուրդը հրավիրել և անցկացրել է 5 նիստ, որի ընթացքում քննարկվել են Քոլեջի ուսանողների հետ կապված, ուսումնական և կառավարչական տարբեր հարցեր, կայացվել համապատասխան որոշումներ:

3. Առաջին կուրսեցիներին ծանոթացնել Քոլեջին, Ուս զործառույթներին և կազմին:

Ուսանողական խորհրդի նախագահի գլխավորությամբ սեպտեմբերի 16-20 կազմակերպվել են ճանաչողական շրջայցներ Քոլեջի լսարաններով, հանդիպումներ Քոլեջի անձնակազմի և ավագ կուրսերի ուսանողների հետ: Ուսանողական խորհրդի նախագահի տեղակալը առաջին կուրսի ուսանողներին ծանոթացրել է Ուսանողական խորհրդի գործառույթներին և Քոլեջի կարգապահությանը:

4. Հանդիպումներ ուսանողության հետ՝ ըստ մասնագիտական խմբերի:

Համաձայն պլանի կազմակերպվել են ընդհանուր 6 հանդիպում-քննարկումներ: Ցավոք, 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը

ամբողջովին կազմակերպվել է առցանց, COVID 19 համավարակի պատճառով Հայաստանում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված:

5. Կուրսերի ավագների հետ միասին գործող հարցումների, կարգերի և ժամանակացույցի վերաբեյալ քննարկումներ:

Ընթացիկ գործողությունը կկազմակերպվեն 2020-2021 ուստարվա ընթացքում:

6. Մասնակցություն կառավարման մարմինների նիստերին:

Համաձայն Քոլեջում գործող կառավարման մարմինների ներքին նորմատիվ փաստաթղթերի Ուսանողական խորհրդի անդամները ակտիվ մասնակցել են բոլոր նիստերին, մասնակցել որոշումների կայացմանը և այլն (**Հիմք՝ խորհուրդների կազմերի հաստատման հրամաններ**):

13. Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում:

2019-2020 ուստարվա ընթացքում COVID 19 համավարակի պատճառով Հայաստանում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված այս ուղղությամբ ոչինչ չի կազմակերպվել:

14. Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառում:

Քոլեջի տնօրենի աջակցությամբ Ուսանողական խորհրդի անդամներով կազմակերպվել է այցելություն Ցեղասպանության հուշահամալիր:

16. Մշակել «Ուսանողի ուղեցույց»:

ՈԱ պատասխանատուի նախաձեռնությամբ Ուսանողական խորհրդի անդամներով մշակել ենք Քոլեջի «**Ուսանողի ուղեցույց**»: Ուղեցույցում ներառված դրույթները, փաստաթղթերը հանգամանորեն քննարկվել են և համաձայնեցվել խորհրդում: Նախատեսվում է այն ամբողջությամբ շրջանառության մեջ դնել 2020-2021 ուստարվանից:

Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա. Խուդաթյան